

1425

5 VIII 3

DAVROS

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԳԱՏԱԿԱՆ

Կը Հրատարակուի Շաբաթը մի Անգամ

ԲԱԺՆՈՐԴԱՊԻՆ

Պուրկարից համար տարեկան	10 ֆր.
» վեցամսեայ	5 »
» եռամսեայ	3 »
» ամի համար տարեկ.	12 »
» վեցամսեայ	6 »

ԱՐՄՈՒՆՔ ԿԱՆԻՍԻԿ

Նամակ, ծրար եւ այլ պէտք է դրկել հետեւեալ հասցեով

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱՔՐԵԱՆ

Տէր և Խորագիր Ցարսոս շաբաթաթերթի

Х. Чакрянъ
Редакторъ на вѣстникъ
„ДАВРОСЪ“

Варна България
Отговорникъ Н. Драгулевъ

H. TCHAKERIAN
Rédacteur du Journal
DAVROS

Varna (Bulgarie).

ՊԱՅՄԱՆՔ

Խմբագրութեան եկամբ գումարը կը հրատարակուի մասամբ կամ ամբողջութեամբ : Հրատարակուած ու չը հրատարակուած ձեռագիրներ եւ չեն տրուիր : Դանուցման տողը 20 անթ. : Երեքէն աւելի անգամներու համար գատ սակարկութիւն : Դանուցմունք կ'ընդունուին ամէն լիզուաւ :

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 24 ՅՈՒՆՎԱՐ 1898

ԹԻԻ 1

1898

Ինչպէս դարերէ անտի սովորութիւն ու վարժութիւն դարձած է ամենքին համար, մենք ալ կ'ըսենք. «ՇՆՈՐՀԱՌՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ԲԱՐԻ ԿԱՂԱՆԴ» կը մտղմենք սրբաւորի եւ բուն բաղձանքը որ դու նուր Նոր տարւոյ տոարակին մէջ մեր երկոյս դժբաղդացեալ Հայ ժողովուրդին համար ալ նոր նոր բարութիւնք թէ քաղաքական եւ թէ տնտեսական, որոց յուսովն կ'ապրի ազգն ողջոյն. նոյնպէս եւ ես աւել կը մտղմենք որ մեր տաք-գլխանի գործիչ եղբայրներն ալ վերջապէս խելաբերին ազգային ծավաւալ, յայտնի թշուառութեանց հանդէպ ու իրենց կարճիկ մտաներով այլեւս չը խաղան Հայ ժողովուրդի ճակատագրին հետ, ժողովուրդին՝ որոյ աչքի առաջ գաղտնիք չը մնայ, եւ ամենամեծ մասամբ հասկցաւ թէ ո՛ր կողմն առաջնորդել զիրենք այդ կեդրոնական ու անկեդրոնական քառի ծաղկումը որոց մասին շատ ասելիք ու խօսելիք ունինք : Տաւրոսի առաջիկայ թիւերով, եթէ յամառին ու մնան իրենց կորագիծ ընթացքի մէջ. իսկ այժմ կ'ըսուի կ'ընենք ու կը խնդրենք եղբայրաբար որ ես կենալով իրենց յամառ եւ յանձնապահ տան ետականութիւններէն, զիջանին ծունր գնելով ժողովրդական ձայնին առջեւ, հաշիւ ու համար տան իրենց արարքներուն ամենայնի եւ յամենայնի : Հրեշտակ չենք որ չը մեղանչենք եւ ստուանայ չենք որ մեզայ չը գոչենք :

Բարձր ազգաց մէջ ընդհանուր սովորութիւն կայ նաեւ Նոր տարիի առթիւ օրագրելը, լրագրելը, ամսագրելը եւ տարեգրելը ընդարձակ խմբագրականներով հինցած տարւոյ անցից ու դարձուածոց պատմութիւնները կ'ընեն, լաւ կողմերը կը ջատագովեն եւ վատ կողմերը կը

պարտաւեն, անշուշտ իւրաքանչիւրն իրեն տեսութեամբ եւ դատողութեամբ. իսկ մենք այդ հոլովեալ տարիներուն մէջ մեր ազգային կեանքին համար ոչ մի միջիջարտական բան չենք գտնել. ամեն ինչ ախուր ու սեւագէժ կը տեսնենք. ցուր, կոկիծ, քստմեղի տարաբեր, եղեւնագործութեանց, նախճիրներու վոյրագ. ու անագորոյն շուրք, արտասուքներու հեղեղ ու հոսանք, մահուան սպառնալիքէն փախչող աւնթիւներու ճիւղեր ու աղաղակներ, անպաշտպան այրիներ, խեղճեր, ամենուրեք սիրական Հայրենի տան դուրսն ու ներսն օրական մահուան ու մեռելութեան մտանում, ահա այսպիսի հրեշտակն դարձւում է մէջ կը գայ Հայ ժողովուրդը մինչեւ կուրծքը արիւններու մէջ թափառած տաք գնել 1898 տարւոյ դրան չեմքին վրայ :

Քանի՜ երջանիկ պիտի համարէինք մենք մեզի, գոնէ ասկէ վերջը եղելութեանց առջեւ անթափուած ու դառն փորձառութիւններէն խրատուած՝ հարուստ կամ աղքատ, ծեր կամ երիտասարդ ձեռք ձեռքի տալով ազգային վեհ՝ միութեան Ս. սեղանին շուրջը բոլորեալ իւրաքանչիւր ոք իւր պարտուց ու պատուոյն գիտակցութեամբ մտածէր այս ազգային թափնը վերջակէտը գտնելու : Իրաւ է թէ ժողովուրդը իր կեղեւով չի կրնար զբաղիլ, ինքը իրմով չի կրնար առաջնորդուիլ, սակայն ժողովուրդը կրնայ եւ պարտաւոր է ընտրել ու որոշել իրեն առաջնորդողները : Տարակոյս չկայ թէ քիչ շատ պատուազգաց անձինք ունենց պէս չեն կարող ինքնակոչ պետ ու զեկամարիչ հռչակել զիրենք, այլ գիտակից ժողովուրդին կը մնայ «ձայն բողմաց ձայն Ս. տուածոյի դրութեամբ միանալ նախապէս ինքը իր մէջ եւ ապա մեծամասն հաւանութեամբ կազմաւորել ազգը զեկամարիչ կարող մարմինը, որոյ մտանակցող անդամք լինին ծանուցեալ ազգասէրք, յայտնի

հմուտ ու գիտակ գիւնադիտական դարձուածոց, ոչ ծայրայեղ պահպանողական եւ ոչ ալ յանդուգն ու անհաշիւ ազատական, այլ իրան միջին ամեն բանի մէջ եւ հանգաւ մանքներէն օգուտ քաղելու գործին մէջ կտորիծ ու անվեհեր :

Արդ, հայ ժողովուրդին կը մնայ կարգադրել Հայկական միակ Միութեան խնդիրը. ոչ ուրիշ աշխատի «Տաւրոս» ուրախ որ ոյժ ունենայ հետզհետէ մանրամասն պարզել Միութեան անհրաժեշտ պէտքն ու նորոգ պայքարն եղանակներէն : Եւ իսկ, բիւր երանի՜ կը լինէր որ յաջողութեամբ կարողանայինք աւանդել այսպիսի մի պատկառելի միութեան պոնծալի գործերը եւ անոնց հետ ըսել :

ԲԱՐԻ ՏԱՐԻ, ԲԱՐԻ ԿԱՂԱՆԴ :

ՏԱՌՈՍ, Ի ԾՐԱԳԻՐԸ

«Տաւրոս» հետեւելիք ուղղութեան մէկ նմոյշը ցոյց տուինք անցեալ տարի «Կառավարի» հրատարակութեամբ, որն որ կենսիւ ունեցաւ Մայիս 9 էն մինչեւ Օգոստոս 7 : «Կառավարի» համար որոշուած կենսիւ խիստ կարճ էր, — 2 ֆրանք բաժնեգրին փոխառէն քսան թիւի փոքրիկ ծաւալ մը :

Արդարեւ «Կառավար» քիչ ապրեցաւ, սակայն այդ կարճիկ կենսութիւն մէջ ալ բաւական քաջութեամբ արձագանք տուաւ ամեն կողմ. իր դուրժած ազատութեանց անդրադարձ ձայներն ստակաւն կը գան կը հասնին մեզ ամեն կողմերէ՝ — Ռուսաստանէն, Պարսկաստանէն, Եգիպտոսէն, Ամերիկայէն, մինչեւ անգամ Տաճկաստանէն եւ եւրոպական ամեն քաղաքներէն, ու մենք մեր խորին եւ սրտային շնորհակալութիւնը կը յայտնենք հրատարակաւ այն բոլոր համակողմ եղբայրք որոնք ազնիւ զգացմունքով

չը զլացան մեզ իրենց բարոյական խրախոյսն ու քաջալերանքը. թէ եւ անպակաս եղան կարգ մը դիմաւորներ, որոնք ուղղակի ու անուղղակի ուղեցին իրենց գարշահոտ լրճունքներով արատաւորել «Կառավարի» անկեղծ տեսութիւններն, սակայն անոնք եւս շուտով ցնդեցան արեգակի առջեւ հալող սառոյցի կտորներու պէս :

«Տաւրոս»ը իւր նախնիքաց առաջնորդին «Կառավարի» ճանապարհորդութիւնը գնաց, այսինքն պիտի ձգէ, շաւառանքն անքնայն այն ամեն զեղծմունք, յիմարական շարժումներ եւ ցոյցեր որոնք հայ ժողովրդական շահուց եւ իրաւանց կը հակառակին, իրապէս ազգին օգտաւէտ ու պիտանի բուն յեղափոխութեան խոնդուս եւ հայ Հայրենիքի բաղձալի ազատութեան սուրբ ու նուիրական դատին վտանգաւոր են :

«Տաւրոս»ը ոչ մի կուսակցութեան չի պատկանիր եւ ոչ ալ նոր կուսակցութիւն մը կուզէ ստեղծել, այլ ի վաղուց ժամանակներէ ամենալեզու փափաքող լինելով միախառն կալիսն պատկառելի ու վստահելի միութեան մը, ժողովրդական ներքին տառապանքներուն եւ նորաքաջած անլուր ու անօրինակ դժբաղդութեանց ազդեցութիւններովն ծնած, ուղղակի այդ մարտիրոս ու նահատակուած ժողովուրդի թերթը պիտի լինի եւ անոր օգտին միայն պիտի ծառայէ, առանց ակամջ դրանքու սպառնալիքներու կամ վայրագոյնութիւններու, ո՛ր կողմէ ալ եւ կած լինին անոնք :

«Տաւրոս»ը առ այժմ շաբաթը մի անգամ պիտի հրատարակուի եւ շաբաթական, ազգային ու քաղաքական լուրերէ եւ հեռագիրներէ գաղտնի զբաղի նաեւ հայ ազգային տեսութեամբ, զրական եւ տեղաւորական ինչպէս եւ Հայաստանի եւ կիլիկիոյ հին ու նոր պատմական տեղեկատուութեամբ, մանաւանդ

ամենաւն սիրելի դարձած Զէյթունի հին ու նոր ժամանակաց քաջագործութիւններէն կենդանի ու հիւսցուցիչ պատկերներ, յիշատակներ իւրոյ բերելով, որոնք գործարար ցարդ անժամօթ մնացած են հայ ժողովրդին:

Եւ վերջապէս նկատողութեան առնելով Պուլիսը և Ռումանիայ եղբարց փոխակն եւս, որոնք զբարգաւորար իրենց սարած միջավայրերու ստիպմամբ իրարարարաւ են, որոշուած է «Տարուսը» նոցա եւս գիւրամասերի և հասկանալի ընելու համար մի մեծկող բաժին ալ թուրքերէնի յատկացնել, և եթէ առաջիկային նիւթական փեմակնիս ներքու ըլլայ, թուրքերէն բաժինը առանձին թերթով հրատարակել և հայերէնի ծաւալը կարելի եղածին չափ ընդարձակել:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Տարուսը» պիտի լայն տեսնէր անցեալ սեպտեմբերին, ինչպէս ծառայած էինք կանխաւ. սակայն հաշիւէ բարձրովն դուրս անսկիւղ մը, այն է ըստ բաւականի ծանր ու միտանկաւոր հրահրութիւն մը որ ստիպեց զմեզ երեք ամսոյ չափ անկողնայ ծառայել որով և չկրցանք մեր խոստումը օրն օրին կատարել. ուստի վստահ ենք որ առնիւ ազգայինք ներդրումս լինելով սոյնպիսի կամքէ անկողնայ պատճառի մը համար, կը փութան իրենց նիւթական աշակցութիւնները փութացնել մեզ, որպէսզի կարող լինինք և միջոց ու նենամք մենք ալ մեր զգացած պարտականութիւնը կատարել լիովին ու անխնայ:

Պա եւս աւելորդ չենք համարեր յայտարարելու թէ, մեզ ծանօթ յարգելի բարեացակամ բաժանորդներէն զատ լրագիր կը զրկուին նաեւ այն անձանց հասցէներուն, որոնք յանձնարարուած կը լինին իրենց ակնկալած ծանօթ ազգականներէն կամ բարեկամներէն. յիշեալ յանձնարարեալ յարգելի ազգայինք եթէ չը բարեհաճին իրենց համար եղած յանձնարարութիւնն պատուելու, կը խնդրուի այնպիսիներէն որ թերթին նոյնութեամբ եւս պարձունեն մեզ. իսկ եթէ գոտին պատուելով կամ թերթը կարգաւէն և ազատութեւն ետըր մեզ վերադարձունեն, գտնէ խղճահար ըլլան իրենց անուաներն ալ յայտնելու, որպէսզի յաջորդ թիւերը կրկին զրկելով պարտաւորեալ փոստի ծախքն ալ վրայ չը տանք:

Միանուագ տարեկան ու վեցամսեայ չը կրցող վճարողներու համար կընդունուի նաեւ նոյն հաշուով եւս ամսեայ եւ միամսեայ բաժնեկրններ, կանխիկ վճարելի:

ՓՈՒՐԻԿ ՆԱՄԱԿՆԵՐ

Թ. (*)

Մենք կեղծում և պատկառելի Հ. Յ. Գալուստիանի սարսափելի լինելով, երբ խօսում եւս նոցա անցեալ գործունէութեանց մասին մանաւանդ երբ խօսողը մօտիկից ծանօթ է այդ գործերին: Նոքա տարուան ամենափոքր քննադատութիւն, այնպէս ինչպէս միջնադարեան ինքնակրօնական և ճիշդ նոյն միջնադարեան են գործ դնում քննադատի դէմ, ինչոր գործ էր դնում այդ իր ժամանակի մարդկութեան վերայ սարսափ տարածող և ներկայիս ամեն ինչ հաստատութիւնը, — ինքնակրօնական, Նոյն միջնադարով աշխատում են ազատ ձայն խեղճել, ուր կտրելի է սպանել ֆիդիլիտետ և ուր այդ քաջագործութիւնն արտաքին պայմանների շնորհիւ տնկութիւն է, աշխատում են սպանել հակառակորդին բարոյապէս, տարածելով ժողովրդի մէջ նրա մասին հրէշային ամբաստանութիւններ: Ահա երկու փորձուած գործերի ընթացքում սրբագործուած զէնքեր, սպանութիւն և ամբաստանութիւն, որոնցմով միշտ խառն, սարսափ միտքեր կուտում են լայն, ազատ մտքի դէմ: Բայց ինչոր մեղանում, հայերիս մէջ միայն տեսնուած և ուրիշ ոչ մի տեղ, ոչ մի ազգի պատմութեան մէջ չէք գտնել, եթէ նոյն փոքր մեք և մեծ ու փոքր ներկայացուցիչների ակնոցներ դնէք աչքերնիդ, այդ այն է, որ յեղափոխական գիւյն սպանութեան և ամբաստանութեան հակառակորդներին, որոնք նոյնպէս յեղափոխականներ են, որոնք նոյն նպատակին են ձգտում միայն ուրիշ միջոցներով:

Ինչո՞ւ այսպէս է: Ինչո՞ւ նոքա, որոնք ընդունել են եւրոպական յեղափոխականների ամենաազատիկ ծրագրերը, որոնց ամեն գլխաւոր հիմքն է ազատ քննադատութիւն, մեղանում այդ ծրագրերը դուռնում են ինքնակրօնային օրէնքներ... Ինչո՞ւ իրենց հայրենիքում այդ ծրագրերը կազմողներ երբէք չը դիմեցին սպանութեան և կեղտոտ ամբաստանութեան միտքանց վառուելու համար, այլ երբ փոխադրուեցին մեր հողի վերայ այդ սարսափների դայն ստացան... Ինչո՞ւ կեղծում և բիւրններ, ձեր պաշտելի Մարքն (Խեղճ մարդ, քանի անգամ դու գերեզմանիդ մէջ դարձած կը լինի շնորհիւ քո անշնորհ հայ հետեւողներին) չը նայելով իւր կատաղի բանակիւններին ուրիշ յեղափոխականների դէմ, չը փորձեց նոցանից մէկին սպանել տալ: Ինչո՞ւ պարսկներ, ձեր ուղղակի ուսուցիչներ 70 ական թուականների Ռուս յեղափոխականները, չը նայելով իւրենց մէջ կազմուած տասնաւորներին:

(*) Մեր յարգելի թղթակցին Լիօի «Կատակ»ի մէջ հրատարակուած փոքրիկ նամակն՝ բուն չարուհակութիւնը:

Մ. Խ.

րենց մէջ կազմուած տասնաւոր կուսակցութիւններին, իրենց հայրենիքի հողը չուղեցին հակառակ կուսակցութեան պատկանող յեղափոխականի արեւմբ և չարատուութեան իրենց անուններ այդպիսի մի հրէշային չարագործութեամբ. իսկ դուք, պարսկներ, Պարսկաստանի թագէտ Առաքեալի վանքից սկսած (յիշում էք, պարսկներ, Ա. Վ. Թ.) մինչեւ կոստանդնուպոլիս այնպիսից էլ դուրս... ուղեցիք հայ տասնաւոր զաւակների արեւմբ, զաւակների, որոնց միայն յանցանքն էր իրենց ազգն ու հայրենիք սիրել և աշխատել ձեր ազգապետ գործունէութեան տալիս տունը... Ինչո՞ւ, պարսկներ, դուք որ զեղեցիկ բառեր ինչպէս են ճշմարտութիւն, մարի, խլճի ազատութիւն, օրէնք հազար անգամ կրկնում էք, ուզում էք խեղճել ազատ կարծիք և քննադատութիւն դիմելով սպանութեան թէ ֆիդիլիտետ, թէ բարոյապէս:

Ինչո՞ւ դուք միամիտների աչքին թող փշուր համար ձեր ազգակործան կուսակցութիւնների գոյութեան իրաւունք համարում էք «կարծիքների», համադրմանների» տարբերութիւն և կատաղում էք, չը լուսած, չը տեսնուած չարագործութեանց դիմում, երբ ուրիշներ էլ ձեր պատկառելի, մեծ գործերի մասին ուրիշ կարծիք, ուրիշ համագումար ունենալ կը դիմում դուք այս թուրք և ինչո՞ւ ներքին չէք պատասխանել, եւ ձեր կազմից պատասխանում, թող կ'առնք, յոյս գնելով ձեր համաձայնութեան վերայ կ'առնեմ, մանաւանդ, որ պատասխանել էր երկար չէ և դուք մի րոպէ ձեր «Մեծ» գործեր թողնելով կը կարգաւ այս մի քանի տղեր:

«Որովհետեւ, պարսկներ, «Խառն» քանիւ քննադատութեան ամեն մի ճշմարտութիւն, դուք դիմեցիք, որ կը պահեցնէր «այն բանը» որի համար դուք յեղափոխական դարձաք, որին տիրելու համար միւլանցից բաժանուեցիք, միմիայն հեռ սկսեցիք կուտել, այդ «մի բան է», որի մասին բանաստեղծներ արհամարհանքով են խօսում, իսկ դուք որ դրական մարդ էք, դուք մանաւանդ լուս առաւմասիրած էք քաղաքական անտեսութեան այն գլուխը, որ ստակի նշանակութեան մասին է խօսում: Այո, ստակ դու գեռ քանի «ինչո՞ւնք» պատասխան կարող ես տալ:

Իհ, պարսկներ, հասաւ այն սարսափելի ժամանակ, երբ ժողովուրդ իւր անասելի թշուառութեան հասած ձեզից հաշիւ է պահանջում, այլ եւս գեղեցիկ բառերով, սուտ խոստումներով սահմանադրւելիք, 16 հազար հայդուկներով միայն միամիտներին կարող էք խաբել:

Լ. Խ.

ՊԱՐՍԱԹՈՒՐԲ ՍԱՀՄԱՆԱԳԻՈՒԹԵՆ(*)

Սիրելի ընկերներ,

Թերեւս մեր նամակ ձեր ձեռք հասնելուց առաջ գաղափարներ Գրօշակի էջերով իւր աշխարհի իրենց շահատակութիւններ հոգաւած կը լինին և հետեւաբար դուք հաւատացած կը լինէք նրանց կատարած քաջութիւնների: Վաղուց արդէն բնական պատրաստուած էր արշաւանք գործելու. քիչ շատ լուրջ կարծուած անձնաորութիւններ այդ գաղափարի իրականացման հակառակ էին և նորա համար էլ մի սարսափելի խառնութիւն և ներքին երկպառակութիւն ինկաւ մէջերին, այնպէս որ այժմ էլ Սարսափականի գաղափարներ հիւղէն աւելի ճիշդբար քաջութեան են, եւս տական և անձնական կոխներ կը մղեն իրարու դէմ: Ի՞նչ և է, մի տու ժամանակ յաջողեցան երեւոյթական խաղաղութիւն սարքել զսահման միջոցներով, անուղղակի կերպով կաշառելով այս ու այն անձնաորութիւնը, այսինքն՝ սմանց չուր ծախսերին աչք գոցելով, ու մանց ուսուց խմկն փող տալով եւ որ տեղի դէշն էր, անկարելի մարդոց կարեւորութիւն տալով: Այս միջոցներով և մանաւանդ համադրելով թէ թողտուտ 15 ին Եւրոպայում վեհաժողով մը կը գումարուի, մի ցոյց կը ցոյց գիւնապատութիւնը և Հայկական հարց նորից սեղանի վրայ կը դրուի... յաջողեցան վերջապէս այն իմաստ ու անմիտ արշաւանքին վճիռ կայացնել:

Յուրիս 5, տուտուտ արշաւային գաղափարներ յաջողեցան պաշտի 3 կողմէն պաշարել Մարդիկայինների վրաններ, որոյ գլխաւորն էր Շարաֆ աղան որ անցեալ տարի կատարեց Աւետիսեանի խառն: Վրաններ 2 ժամու չափ գնդակի առաջ առնելով, կը յաջողին մեծ մասամբ կին և աղայ բաւական թուով կատարել: Վրաններից Շարաֆ ինքն փախչելով կ'ազատի, էրիկ մարդեր մեծ մասամբ փախչելով զանազան գիւղեր կը գրաւեն և կսկսին կուտել: Հայդուկ հերոսներ երբոր կը տեսնեն թշուառի դեղակ, իրենց իրարանցումով եւս կը փախչին խայտառակ կերպով: Վրանների մէջ իրենցմէ 6-7 մարդիկ իրենց ընկերներու գնդակներով կ'սպաննուին և 5 մարդ:

(*) Թէեւ սոյն նամակ շատ կանուխ հասած է մեզ, սակայն իր պարունակութեան կարեւորութեամբ համար յարմար գաղափար «Տարուս»ի մէջ գնել չը նայելով իր հետեւիսն:

Մ. Խ.

էլ կը վերաւորուին . մէկ խօսքով քնած տեղ կը յաջողին 157 հոգի սպաննել , սակայն թշնամիի դուրսը վերջ ոչ մի պատուաւոր դուրս չեն տեսնար , ոչ մի կարգ կանոն չեն դէս ու դէն կը փախչին մինչեւ 8 օր , 1 ու 2 ու 10 ու հազիւ հազ կարողացան այստեղ հասնիլ , մինչև իսկ իրենց ամենահաշտակաւոր հերոս Նիկոլ 3 օրէն յետոյ դուրս ինկաւ . իսկ ընդհանուր հրամանատար Վարդգոյ միակ Դէակասար կուգայ կը միանայ : Հա՛ , մոռցայ բնեւոր որ հիմայ Ստամբուլի վիճակը անտա- նելի է , բոլոր փախստականներ խառն կը փնտռուին . գաղթական- ներ մեծ թուով հաւաքած է կառու- վարութիւնը Գաւրէի կողմեր ու զարկերու . այս 8 աւուր ընդաց- քով Ստամբուլ 1000 թուական տու- գանք տուած է և զեռ Աստուած գիտէ :

Այսօր մօտ 25000 քիւրտեր հա-ւաքուած են սահմանադուր , Սալ- մաստ արշաւելու : Վատնդը օրհա- տական է , 4-5 օր առաջ հին քա- ղաքի վերեւ Հընմալանուտ հայա- բնակ գիւղ տեւրակ դարձաւ և 9 մարդ էլ սպաննեցին . քիւրտերն 2 օր առաջ Բայի քով վառ անուն հա- յաթիւրք գիւղ բոլորովին տակն ու վրայ արին , 200 մարդ սպաննուած են որոյ 15ը թուրք է և ամբողջ թաղնուած : Աստուած վերջերինս բարի անէ . ահա՛ հայ ազգասէրներ զորք որ հայրենիքէն զոտ Պարս- կահայերի կեանքն էլ վտանգեցին :

ՆԱԽԱԿ ԽՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ
ՊՈՒՐԿԱՋԵՆ

Միութեան ձայնը , ինչպէս ամեն կողմ , Պուրկաղի մէջ ալ իւր ար- ձագանքը գտաւ :

Ժողովուրդը , որ մեծաւ մասամբ կուսակցութեանց կեղծ իրենքն ու անվերջ խաղերէն զոտուած բոլորովին չեղօք գիւրք մը կը բռնէր ցեղափո- խութեան հոնքէլ , մէկ քանի ան- կեղծ անձնաւորութիւններու յոր- գործածք սկսաւ վերջերս սխալիլ և իւր մէջը կազմակերպուելով Ս. գործին համար պատրաստուիլ , փոխանակ իւր գրանցները անձանթի և ինքնակազմ անձնաւորութիւններու յանձնելու :

Տեղւոյս Հնչակեան կուսակցու- թիւնը խղերով իւր կեդրոնին հետ ամեն խաղերը , հետեւեցաւ ժողո- վրդեան ձայնին , որ Միութեան կ'ա- ղաղակէր . բայց ցաւօք կը յայտ- նենք թէ Դաշնակցականք՝ որոյ ներկայացուցիչք տառնակներով երթեւեկել սկսած են հոս ժամա- նակէ մ'ի վեր , ոչ միայն Հնչակ- եաններու բարի օրինակին չհետե-ւեցան , այլ ընդհակառակը՝ ամեն օրոտի աղիւլ գեղացւոյն տանակիւ ընկելով ամեն ջանք ըրին և զեռ

կ'ընեն Միութեան ինչ իրը խանդ ա- լելու : Այս առթիւ Պուրկաղի Ժո- ղովուրդը համոզում գոյացուցած է արդէն թէ այդ կուսակցութեան նպատակն ու ծրարելը Հայաստանը փրկել և Հայ ազգը իւր տանջանք- ներէն ազատել չէ , այլ ճիշդ ինչն էր ընկերութեան նման բան մ'է- դա՝ Հայ Յեղ . Դաշնակցութիւն : Խաղաղութիւն անուան տակ , անխիղճ էակներու ճիւղալիքին կազմակեր- պութիւն մը , որ միայն և միայն իւր «գործիչ ներկայացուցիչ» ակ- դամներուն քարօրոքեան հաւատ կ'աշխատի , այսինքն ազգէն դառն կը հաւատէ , և որչա՛փ անկեղծներ , ժողովրդի հարազատ զուակներ անգլխակցարար կը նպաստեն ա- սոնց : Թերեւս օմանք կարծեն թէ այս առաջնան զաւանտութիւն կարելի չէ ընել , մանաւանդ երբ մարդ ընկերութեան դաշնակցու- ներով ստորեւալ է և . . . երկար մտղեր կը կրէ , բայց մոտաւոր ապա- գան պիտի յայտնէ ամեն բան :

Մենք չենք ուզեր տառ մանրու- մանութեանց մէջ մտնել և թուել այն ամեն ստոր միջոցները՝ զորս Դաշնակցութիւնը Պուրկաղի մէջ ի դուրս դուրս , Միութեան ձայնը խեղ- քելու համար . ինչեք միայն թէ կիրակի օր մը տեղւոյս տէր Սա- հակ քահանան իրենց հրահանգով եկեղեցւոյ բեմէն կ'ըսէ թէ «Միութե- թեան ինչ իրը յարուցանողները սրկաներ , շահամբներ , ցեցեր , գողեր և Սալթանի լրտեսներ են :

պէտք չէ բնաւ այդ գաւառն ան- ձանց հետեւիլ , որոց նպատակը ազգին մէջ խռովութիւն հանել է միայն , այլ պէտք է հետեւիլ կու- սակցութեանց և այն կուսակցու- թեան (Դաշնակցական) որ արդէն ահագին ուժեր ունի պատրաստ սահմանադուրը և վանի այս մասն շարժումներու յարուցիչն է » :

Հարկ չկայ բացատրելու թէ քա- հանային այս անխոհմ խօսքերը ինչ ծանր հետեւանքներ կ'ընային ունենալ . ինչեք կ'իրակի բարեբաղ- դարար ժողովուրդը ստիպուած իւր ըլլալով քահանային քարոզը թէ եւ անմիջական անկողնութիւն տառ չի բերաւ եկեղեցւոյ մէջ , բայց ժո- ղովուրդը եղբարի ինչը յետոյ խմա- նալով Թաղ խորհուրդի գիմնց և զայն պիտի ստիպանաւ յայտարա- րեց ամեն խաղի թեանց մասին որ կ'ընեն յաւաքիկային ժողովրդեան մէջ ծաղիլ քահանայի ապօրինի ըն- թացքին հետեւանք :

Միտքեւականք

ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԶԵՋԵԼՈՒ ՀՐԱՒԵՐ

ԱՌ ՍՈՒԼԹԱՆ

Գայլ մ'ալ գէպ յանգունդ :

Մինչ Հայութիւնն անհուն սոսկալի ցաւերու մէջ կը տառապի , կ'այրի ու կը մրկի և օրհասական ճիւղաժամի մէջ կը տապալկի , մեր յեղափոխական կոչ- ուած ներքին հրէշներ իրենց ուղղակի- ծան գործունէութեամբ Հայութիւնը

ջնջելու հրաւեր ուղղելով սոս Սուլթան , անխղճօրէն կուզեն Հայութեան դաժ- րանականը կարգար :

Բիւզանդիոնի երկնքի տակ , զեռ շատ չընէր , անխիտանական ուժը մ'ալ պայ- թեցաւ : Պոլսոյ Հայն դարձեալ ահ ու զողի մոտնուած ու Թուրքիոյ ամբողջ Հայութեան զոդահար՝ վայրկեանէ վայրկեան պիտի սպաննեն նորանոր զարհուրելի անակնկալներու : Եւ ի- րօք , ո՛վ գիտէ , ի՞նչ քառմկելի եղիւ- նագործութեանց թատր պիտի դառնայ մեր հայրենի աշխարհ ու ի՞նչ սոս- կալի հալածանքներու : պիտի մատ- նուին մեր բազմաշարք հէք և զ- բարք . արձակուած ուժերու հակա- հարուածը արդեօք քանի՞ ուժեղե- թեամբ պիտի շանթաւորէ անպաշտպան խեղճ հայ ժողովուրդը :

Է՛հ , ուրեմն , ինչո՞ւ այս հարուած հողեւորք Հայուն , ահա պատասխանը զոր կուտան . — Եթէ ներկայ պարա- գայից մէջ ցոյցերը և մասնակի շար- ժումները չեն կրնար մեր ազատութեան յանդիլ , կրնան զարկ մը տալ բարենո- րոգման ինչորոշն որ հակառակ չէ եւրո- պայի բազմաքիւն և ոչ իւր քաղաքա- կանութեան :

Ո՛հ , մարդ ապուշ պէտք է ըլլայ այս- քան զառն փորձեր յետոյ , զեռ յու- սալու համար թէ մասնակի շարժումնե- րով և անխիտանական ցոյցերով կա- րելի է Հայ ժողովրդի վիճակը բարու- րել :

Անխիտանական ցոյցեր բարենորոգ- մանց ինչորոշն զարկ մը կուտան եղբ , բայց ո՞ր բարենորոգմանց , երբ թուրքն բարենորոգում ըսելով կոտորում ու ա-ւեր կը հասկնայ , իսկ Թուրքիոյ վրայ Հայուն անմիջ արեւուն հոսմամբ և րո- պական քոնթրոլ հաստատուելու յոյսեր տառելը պարզապէս գէթ ներկայիս մէջ արթնանալու է և , աւելի սոսկալին , դաւաճանութիւն է հանդէպ Հայութեան :

Այսքան դառն փորձեր յետոյ , ա- լեւի նման փայլուն յեղափոխական ազդանքի շահատակութիւնէ յետոյ , ա՛լ երբէք չենք կրնար կարգ մը յեղափո- խականներու ազդարարան ընթացքը ազդարարութեան արդիւնք համարել , այլ եւրոպիոյ մէջ նստած ձոխ ու փարթաւ կեանք մը վարելով , Հայութիւնը ջնջե- լու ուղղութեամբ իրենց թաղուն նը- պատակին հանելու փորձեր : ()

Ի նպատակ իրենց քոսիկի հարուստնե- լէն բռնի զրամկորդելու , —ուղղակու- թիւնը և Կարեկցեանի , Հայր Արսէն Թոքմաքեանի և այլ բազմաթիւ հայ- րենապէրներու եղբայրասպասութիւնը յեղափոխութեան անունով նուիրազոր- ծեցին և զեռ ազատութեան անունով Հայութիւնն ալ կուզեն ջնջել :

Վատե՛ր . . . :
Ձէ , չէ տակայն , չէք կարող տլիւս երկար ապրիլ , չէք կարող ձեր վատ

() Մեր յեղափոխական կեդրոնն ու պիւժոն ընկերակցական լինելով , իրենց կէս նպատակի ընտրած են թրքական յոռի ու վատթար վարչութիւնը ուս- պալելով , Գարլ Մարքեանի զրախան հաստատել ամբողջ Թուրքիոյ մէջ : Այդ պատճառաւ էր որ պատասխանութեան հրաւերներն ուղղեցին վայրենի քիւր- տին ու մոլեռանդ թուրքին ու Երի- տասարդ Թուրքերու հետ միասին գոր- ծակցիլ ջանացին :

Թուրքիոյ ամբողջ ժողովուրդը առանց ազդարարական խորութեան , բռնութեան ճիրաններէն ազատելով ընկերակցական երանութեան գիրկն ձգելու երեւակա- յութեան համեմատ համար , փոքրիկ Հայ ազգին ջնջումը նշանակութիւն չունի մեր լ'ա՛յն զաւապարներով տո- դորուած Սոցիալ-Դեմոկրատ կեդրոնա- կաններու և պիւրոյականներու համար :

Նպատակին հասնիլ , ժողովրդային ար- դար ցատուին մոտաւորա՛ պիտի պոռթ- կայ հրաբուխի մը նման ու իւր լաւա- ներուն տակ այրէ ու մրկէ ձեզ . և ձեր ճակտին , անխիղճներ , որ անարդ գրամի փոխարէն ձեր խիղճն ու պիւջ վաճառելով Հայութիւնը քնացնել ջա- նացիք , թուք ու մուր պիտի ծայրէք : Սոսկացէ՛ք

ՏԱԽՐՈՒ ՍՈՒՐ

ՀԱՆՆԵԼՈՒԿ ՀՈՍՀՈՍԻՆ

Նորայոյն ձեռով բեղոյր մը գլխին եւ արծաթադուր ձեռքին մի եղև Մէկը կը վազէ միշտ ապիս անդին Անշուշտ վախորէն հոստա մ'է նորեկ :

Փողկային է խիստ պարզ , մի չորի կտոր թէ չապիկին ասես , իւրոտ ու սիւս սեւ , Բայց նրբաճաշակ հաղած ձեռնոցներ կուտայ միշտ , կուտայ , ա՛յ ու ձախ բարեւ :

Դեռ չէ աւարտած ինչպէսեւ չըջան Ոչ մի դպրոցի , բայց պիտէ չա՛ս բան , Ու երբ մոտենաւ հարցունել նրան ինքզինք կը ծախէ ակաղեմական :

Մենք զաւաքից պոլս ոտք չը նետած կուզէ որ հաւատնք թէ ման է եկած Բարիկ կամ Լոնտոն , ամբողջ եւրոպան կարծես թէ ըլլար աղիւթն ճամբան :

Սրտիկը բոխ է երբեմն ալ կրքոտ երբ հասկըցունես իրեն համարտ «Թէ զուր կ'աշխատիս , զուր քրտինք թափես

Դու մի նորեկուկ թեթեւալիկ ես» :

Բեզ հեռ չի խօսիլ ալ այնուհետեւ Կ'երթայ փնտռել նոր պարզամիտներ , Բայց բոլոր ջանքերն կ'անցնին ի դերեւ Զի բանը բանէն շատոնց է անցեր :

Նա այսպէս ահա կ'ըլլայ ծաղրելին Հասարակութեան լրջամիտ դասին , Բայց չի փնտռեր միակ բանալին Որ կրնայ բանալ դուռը զաղտնիքին :

Այլ խիստ փոքրած միշտ կը մոտայ Կ'անիծէ սեւ բազին ու կը մոռայ թէ ինչո՞ւ արդեօք ծնել է ինք հայ երբ ազգը իրեն յարգը չը ճանչնար :

Օր մը շատ խորունկ մտածեց վերջ Կ'ըսէ «Զար չի կայ , պէտք է որ փոխուիմ «Թողում արծաթիկայ դաւապան , ձեռնոց եւ հին լայնեղ գլխարկ մը դուրսի :

«Ունիմ խիտ մաղեր , կրնամ երկարել Մօրուս ալ քիչ քիչ կը բռնանի ինչ ինչ Ահա այս կերպիւ կ'ըլլամ գլխի տէր Հոգ չէ թող կարծես դիս հոստի ալ բաւեր :

«Բայց չեւան նորէն վրտա ծիծաղին , Ասելով թէ , գա՛ , ո՛վ է սա անլին Զորնայ բազըս որ չունիմ բարեկամ Որուն իմ անկեղծ սրտիկըս բանամ» :

«Կ'երթայ կը կանգնի հայեւոյն առջեւ Ուրտեղ տեսնելով իւր գէմքին պատկեր Կ'ըսէ . «Անհրման մարդ ես , արգարեւ Գեղնից լաւագոյն չը կայ ինձ ընկեր :

«Ասա՛ ուրեմն ինձ անկեղծօրէն թէ չեմ նրմանիւ ճիշդ Բօլ-Լա-Յարքին եթէ քիչ մըն ալ մաղերս երկարին Ո՛հ , չուս պիտ'հասնիմ ես իմ փափաքին :

«Երբ գլխի մաղերս այսպէս ցիրու ցան Զիս օր մը տեսնեն փողոց կամ շուկան Պիտի համոզուին և պիտ' հասկընան թէ չեմ իրենց պէս մարդ սովորական» :

Բարոյականը . — Ատանկ չորթիներ , որոնք ինքզինքնին

Բան մը կը կարծեն , մեր մէջ խիստ շատ են Հայեւոյն զիմաց ըրած փորձերնին Մեզ ալ երբեմն կ'ընէ սալ կ'ուզեն :

Ղ. ՂՈՒՐՊԵՐ

